ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.07.2013թ.
205-ի 5

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրե հետեւյալ տեղեկությունները.

1. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքում քաղաքային տրանսպորտի (միկրոավտոբուսների, ավտոբուսների եւ տրոլեյբուսների) ուղեվարձի փոփոխման (ավելացման՝ 100-ից 150 ՀՀ դրամ) մասին Երեւանի քաղաքապետի որոշման պատճենը,
2. Խնդրում ենք հայտնել, թե Երեւանի իրավական ակտերի ո՞ր տեղեկագրում (ո՞ր համարի կամ ո՞ր ամսաթվի տեղեկագրում) է հրապարակվել Երեւանի քաղաքապետի վերոնշյալ որոշումը եւ ե՞րբ է հրապարակվել,
3. Երեւան քաղաքում քաղաքային տրանսպորտի (միկրոավտոբուսների, ավտոբուսների եւ տրոլեյբուսների) ո՞ր երթուղիների վարորդներն են ստանում ֆիքսված աշխատավարձ եւ որքա՞ն է կազմում նրանց զուտ աշխատավարձը (խնդրում ենք նշել երթուղիների համարները եւ յուրաքանչյուր երթուղու վարորդի աշխատավարձի չափը),
4. Երեւան քաղաքում քաղաքային տրանսպորտի (միկրոավտոբուսների, ավտոբուսների եւ տրոլեյբուսների) ո՞ր երթուղիների վարորդներն են ստանում չֆիքսված աշխատավարձ, այն է՝ վճարում ամենօրյա ֆիքսված գումար երթուղին սպասարկող կազմակերպությանը (գծատիրոջը), ապա՝ մնացած գումարը ստանում որպես աշխատավարձ (խնդրում ենք նշել երթուղիների համարները):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց ***հետո 5-օրյա ժամկետում:*** Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան